ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 օգոստոսի 2020 թվականի թիվ 301 -Ա

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՔՊ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲՈԼՈՐ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածով սահմանված, ՀՀ Տավուշի մարզի տարածքում հաշվառված ապաստարանների նորմատիվ պահանջներին համապատասխանության ուսումնասիրության և դրանց քանակի հստակեցման, ՔՊ պլանների ճշգրտման, կառավարման մարմինների և ՔՊ կազմավորումների պատրաստականության բերման, հակառակորդի խոցման միջոցներից բնակչության և տնտեսության օբյեկտների պաշտպանության միջոցառումների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով՝

որոշում եմ.

1. ՀՀ Տավուշի մարզի համայնքապետերին.

1) ճշգրտել և ներկայացնել քաղպաշտպանության համայնքային պլանները,

2) բնակչության ազդարարման և իրազեկման համար ճշգրտել բոլոր համայնքների և վարչական տարածքների ղեկավար անձանց հեռախոսահամարները,

3) թարմացնել բոլոր ապաստարանների և թաքստոցների տվյալները, առաջարկել վայրեր և հնարավորություններ՝ պարզագույն թաքստոցներ կառուցելու համար,

4) իրազեկել սեփականաշնորհված նկուղային տարածքների բոլոր սեփականատերերին՝ անհրաժեշտության դեպքում տարածքները բնակչության պաշտպանությանը տրամադրելու մասին,

5) ճշգրտել ինքնաբավ էլեկտրամատակարարման սարքերի պահանջարկը, նրանց տեխնիկական վիճակը,

6) ներկայացնել տեղեկանք ինքնաբավ կենսաապահովման հնարավորությունների վերաբերյալ՝ համաձայն 24 հունիսի 2010 թվականի N 824-Ն որոշման,

7) ճշգրտել համայնքների պահեստային կառավարման կետերի առկայությունը, գնահատել նրանց կարիքները և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները:

2. Մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետին.

1) ներկայացնել դպրոցների, մանկապարտեզների ու բուժկետերի շենքերի կարիքների և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների գնահատական,

2) իրականացնել Գանձաքար-Իծաքար անվտանգ ճանապարհի բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքների գնահատում:

3. ՀՀ Տավուշի մարզի ՔՊ բժշկական ծառայության պետին.

1)/ ճշգրտել և ներկայացնել համայնքներում առկա ամբուլատորիաների կարիքները և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները,

2) ճշգրտել և ներկայացնել առաջնային բժշկական օգնություն ցուցաբերող, ուսուցում անցած անձնակազմի թվաքանակը, հեռախոսահամարները:

4. ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի ՄՓ վարչության պետին.

1) ճշգրտել և ներկայացնել բնակչությանն ուղղված բոլոր տեսակի հանձնարարականները և հաղորդագրությունների տեքստերը,

2) կատարել վտանգավոր տարածքները դիտարկելու համար տեսախցիկների առկայության ստուգում և կարիքների գնահատում,

3) ստուգել ազդարարման համակարգի՝ շչակների, բարձրախոսների առկայությունը:

4) աջակցել համայնքապետերին բոլոր ապաստարանների և թաքստոցների տվյալները թարմացնելու, պարզագույն թաքստոցներ կառուցելու համար վայրեր առաջարկելու գործընթացներում:

5. ՀՀ Տավուշի մարզի ՔՊ առևտրի և սննդի ՔՊ ծառայության պետին՝ ճշգրտել մարզի տարածքում պարենային և ոչ պարենային ապրանքների, մարդկանց կենսաապահովման և պաշտպանական տարբեր սարքերի, գույքերի պահեստների առկայությունը, խնդիրների վերաբերյալ զեկուցել:

6. ՀՀ Տավուշի մարզի տարհանման հանձնաժողովի նախագահին.

1) ճշգրտել տարհանման երթուղիները, ստուգել տարհանման հավաքակայանները, ժամանակավոր տեղակայման և երկարատև բնակության կետերը, խնդիրների վերաբերյալ զեկուցել:

2) ստուգել տարհանման համար նախատեսված չկցագրված տրանսպորտի առկայությունը և տեխնիկական վիճակը:

7. Որոշման-կատարման համար սահմանել 10 օր և կատարման պատասխանատու նշանակել Նիկոլայ Գրիգորյանին:

ՄԱՐԶՊԵՏ ՀԱՅԿ ՉՈԲԱՆՅԱՆ

X

19 օգոստոսի 2020թ.
ք. Իջևան